



Տեղեկանք

Հոգեկան առողջության ոլորտի
վերաբերյալ հրապարակումների
մշտադիտարկման արդյունքները
2018-2020 թվականներին

Վանաձոր

2021

Յեղիսակային խումբ

Կազմեց՝ Մարիետա Թեմուրյան

Խմբագրեց՝ Արթուր Սաքունց



Սույն տեղեկանքը պատրաստվել է Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստանի ֆինանսական աջակցությամբ: Տեղեկանքում արտահայտված տեսակետները, մեկնաբանություններն ու եզրակացությունները հեղիսակներինն են, և հնարավոր է, որ չհամապատասխանեն ֆինանսավորող կազմակերպության տեսակետներին:

Բովանդակություն

Նախաբան	4
Հրապարակումների աղբյուրները	6
Հրապարակումների բնույթը, հանրային վերաբերմունքի ձևավորման վրա դրանց ազդեցությունը	11
Հրապարակներում մարդու իրավունքների խախտման դեպքերի արտացոլումը	15
Ամփոփում	18

Նախարան

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը 2011 թ.-ից մշտադիտարկում է Հայաստանի Հանրապետության զանգվածային լրատվության միջոցները, պետական մարմինների պաշտոնական կայքէջերը, հավաքագրում և վերլուծում է հոգեկան առողջության ոլորտի հրապարակումները՝ նպատակ ունենալով դրանց միջոցով գնահատել հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների պաշտպանության հարցում պետական քաղաքականությունը և այդ իրավունքների ապահովման վիճակը:

Սույն տեղեկանքում ներկայացվում են 2018-2020 թթ.-ի մշտադիտարկման արդյունքները՝ 2017 թ.-ի տվյալների հետ համադրությամբ:

Մշտադիտարկվել է 16 կայքէջ. 4-ը պետական մարմինների՝ police.am, moh.am, prosecutor.am, mlisa.am, 12-ը՝ լրատվական կայքեր՝ news.am, a1plus.am, lragir.am, 168.am, 7or.am, epress.am, ilur.am, galatv.am, armlur.am, politik.am, operativ.am, hhpress.am:

Հրապարակումները վերլուծվել և դասակարգվել են

1. ըստ տարածման աղբյուրի՝

- *պետական մարմինների պաշտոնական կայքէջերով հրապարակված նյութեր,*
- *զանգվածային լրատվության միջոցներով հրապարակված նյութեր:*

2. ըստ պետական մարմինների, կազմակերպությունների և մարդկանց խմբերի

3. ըստ բովանդակության՝

- *քրեադատավարական գործողությունների իրականացման վերաբերյալ (քրեական հետապնդման, բերման ենթարկելու, ձերբակալման, նախաքննության, դատաքննության, պատժի նշանակման, հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ կիրառվող հարկադրանքի ու պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ նյութեր),*
- *տեղեկատվական (օրինակ՝ վիճակագրական տվյալներ ներկայացնող, տարբեր հետազոտությունների, հոգեկան առողջության պահպանման, հոգեկան առողջության խնդիրների առաջացման պատճառների, հոգեկան առողջության բնագավառում իրականացվող միջոցառումների, հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց կողմից ինքնասպանության և ինքնասպանության փորձերի վերաբերյալ նյութեր),*
- *դիրքորոշում արտահայտող (որպես դիրքորոշում արտահայտող հրապարակումներ են դիտարկվել կոչերը, բաց նամակները, հայտարարությունները, հարցազրույցները):*

4. ըստ հանրային կարծիքի ձևավորման վրա ունեցած ազդեցության՝

- *հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ բացասական վերաբերմունք ձևավորող,*
- *հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ դրական վերաբերմունք ձևավորող և*
- *չեզոք բնույթի (դրական կամ բացասական վերաբերմունք չձևավորող):*

Առանձին դիտարկվել են նաև այն հրապարակումները, որոնք վերաբերում են հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների ենթադրյալ խախտմանը:

Հրապարակումների աղբյուրները

2018-2020 թթ.-ին հավաքագրվել է հոգեկան առողջության ոլորտի վերաբերյալ 1272 հրապարակում (2018 թ.՝ 405, 2019 թ.՝ 437, 2020 թ.՝ 430 հրապարակում): Հավաքագրված 1272 հրապարակումներից 40-ը տարածվել է պետական մարմինների պաշտոնական կայքէջերով, 1232-ը՝ զանգվածային լրատվության միջոցներով (տե՛ս աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Հրապարակումների դասակարգումը՝ ըստ տեղեկատվության տարածման աղբյուրների

N	Հրապարակումների աղբյուրը	2017 թ.		2018 թ.		2019 թ.		2020 թ.		Ընդամենը	
		Թիվը	Տոկոսը	Թիվը	Տոկոսը	Թիվը	Տոկոսը	Թիվը	Տոկոսը	Թիվը	Տոկոսը
1	Պետական մարմնի պաշտոնական կայքէջ, որից	27	5.4	13	3.2	11	2.5	16	3.7	67 ¹	3.8
	ՀՀ առողջապահության նախարարություն	15	3	10	2.5	6	1.4	10	2.3	41	2.3
	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	8	1.6	1	0.2	1	0.2	5	1.2	15	0.8
	ՀՀ ոստիկանություն	2	0.4	2	0.5	3	0.7	0	0	7	0.4
	ՀՀ դատախազություն	2	0.4	0	0	1	0.2	1	0.2	4	0.2
2	Զանգվածային լրատվության միջոց	473	94.6	392	96.8	426	97.5	414	96.3	1705	96.2
Ընդամենը		500	100	405	100	437	100	430	100	1772	100

Ինչպես տեսնում ենք աղյուսակ 1-ից, 2018-2020 թթ. ընթացքում պետական մարմինների պաշտոնական էջերով ոլորտի վերաբերյալ հրապարակումների թիվը նկատելի նվազել է: Սա առավելապես պայմանավորված է առողջապահության նախարարության և 2018-2019 թթ. աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կայքէջերում հրապարակումների նվազմամբ:

2018-2020 թթ.-ին առավել մեծ թվով՝ 26 հրապարակումներ տարածվել է ՀՀ առողջապահության նախարարության կայքէջով, որոնցից 6-ը վերաբերել են օրենսդրական բարեփոխումներին, այդ թվում՝ հոգեմետ դեղերի բացթողման կանոնակարգերին, 5-ը՝ հանդիպումների, որտեղ ներկայացվել է նաև հոգեկան

¹Հարկ է նշել, որ հավաքագրվել են նաև այն հրապարակումները, որոնք մասնակի են անդրադառնում հոգեկան առողջության ոլորտին: 2018 թ. պետական մարմինների պաշտոնական կայքէջերից հավաքագրված 13 հրապարակումներից այդպիսինն են 6-ը, 2019 թ. հավաքագրված 11 հրապարակումներից 1-ը, 2020 թ. հավաքագրված 16 հրապարակումներից 7-ը:

առողջության ոլորտը կամ ոլորտին նվիրված համաժողովների կազմակերպմանն ու մասնակցությանը, 3-ը՝ Քովիդ-19-ով պայմանավորված ոլորտում աշխատանքներին, երկուական նյութ՝ Մարդու իրավունքների պաշտպանի գեկույցին և արձանագրված խնդիրների՝ պատկան մարմնի կողմից լուծման պատրաստակամությանը, հոգեկան առողջության միջազգային օրվան, հոգեկան առողջության կենտրոններ առողջապահության նախարարության ներկայացուցիչների այցերին, հոգեկան առողջության կենտրոններում գտնվող անձանց գրիպի դեմ պատվաստման հարցում առաջնահերթություն տալուն և մեկական նյութ՝ հոգեկան առողջության բարելավման շարժական կլինիկայի ձեռքբերման ծրագրին, հոգեկան առողջության կենտրոնում բուժում կամ խնամք ստացող անձանց՝ հանձնուքների արգելքով պայմանավորված հացադուլին, Սևանի հոգեկան առողջության կենտրոնում արցախցիներին ծառայությունների մատուցմանը և թմրամիջոցների գործածման հետևանքով հոգեկան և վարքային խանգարումների վիճակագրությանը:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը երեք տարիների ընթացքում տարածել է 7 հրապարակում, որոնցից 5-ը հոգեկան առողջության ոլորտում տարբեր ծրագրերի իրականացման վերաբերյալ էին, մեկական նյութ՝ Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատում առերևույթ չարաշահումների բացահայտմամբ պայմանավորված տնօրենի՝ աշխատանքից ազատման և ոլորտում առկա հիմնախնդիրների ու դրանց հաղթահարման հնարավորությունների վերաբերյալ:

ՀՀ ոստիկանության կողմից 2018-2020 թթ.-ին հրապարակվել է 5 նյութ, 4-ը՝ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց կողմից ՀՀ օրենսդրությամբ արգելված գործողությունների կատարման, մեկը՝ Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատում առերևույթ չարաշահումների վերաբերյալ: ՀՀ դատախազության հրապարակած նյութերը վերաբերել են Սևանի հոգեբուժական հիվանդանոցում առերևույթ կոռուպցիոն չարաշահումներով պետությանը մոտ 50 մլն ՀՀ դրամի վնաս պատճառելով պայմանավորված քրեական գործի հարուցմանը և հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձի կողմից քրեական օրենսգրքով չթույլատրված արարքի կատարմանը:

Չանգվածային լրատվության միջոցներով 2018 թ.-ին հավաքագրված 405 հրապարակումներից 91-ը, 2019 թ.-ին հավաքագրված 437-ից հրապարակումներից 115-ը, 2020 թ.-ին հավաքագրված 430 հրապարակումներից 153-ը ևս տարածվել են ՀՀ պետական մարմինների կամ դրանց ներկայացուցիչների տրամադրած տեղեկատվության հիման վրա (տե՛ս աղյուսակ 2):

Աղյուսակ 2

ՉԼՄ-ներով տարածված հրապարակումների դասակարգումը՝ ըստ ՀՀ պետական մարմիններից և այլ աղբյուրներից ստացված տեղեկատվության

N	Պետական մարմիններ	2017 թ.		2018 թ.		2019 թ.		2020 թ.		Ընդամենը	
		Թիվ ը	Տոկոսը	Թիվ ը	Տոկոսը	Թիվ ը	Տոկոսը	Թիվ ը	Տոկոսը	Թիվ ը	Տոկոսը
1	Ոստիկանություն	19	12	5	5.5	3	2.6	3	1.9	30	5.8
2	Քննչական կոմիտե	42	26.6	30	32.9	15	13	15	9.8	102	19.7
3	Առողջապահության նախարարություն	34	21.5	34	37.4	19	16.5	37	24.2	124	24
4	Տեղական ինքնակառավարման մարմին	2	1.3	0	0	5	4.4	5	3.3	12	2.3
5	Նյարդահոգեբուժական հաստատություն	9	5.7	8	8.8	6	5.2	6	3.9	29	5.6
6	Ազգային ժողով/պատգամավորներ	7	4.4	2	2.2	14	12.2	15	9.8	38	7.3
7	Արտաքին գործերի նախարարություն	0	0	4	4.4	1	0.9	1	0.7	6	1.2
8	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	2	1.3	1	1.1	13	11.3	18	11.7	34	6.6
9	Դատական տեղեկատվական համակարգ	5	3.2	1	1.1	0	0	0	0	6	1.2
10	Պաշտպանության նախարարություն	3	1.9	2	2.2	2	1.7	1	0.7	8	1.5
11	Արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայություն	0	0	0	0	8	7	1	0.7	9	1.7
12	Դատախազություն	2	1.3	0	0	15	13	2	1.3	19	3.7
13	Արտակարգ իրավիճակների նախարարություն, նաև փրկարարական ծառայություն	15	9.5	1	1.1	4	3.5	11	7.2	31	6
14	Կառավարություն	17	10.7	0	0	6	5.2	21	13.7	44	8.5
15	Ազգային անվտանգության ծառայություն	0	0	0	0	0	0	6	3.9	6	1.2
16	Այլ	1	0.6	3	3.3	4	3.5	11	7.2	19	3.7
Ընդամենը		158	100	91	100	115	100	153	100	517	100
Այլ մարմիններ, մասնավոր կազմակերպություններ և/կամ ոչ պաշտոնատար անձինք		Թիվ ը	Տոկոսը	Թիվ ը	Տոկոսը	Թիվ ը	Տոկոսը	Թիվ ը	Տոկոսը	Թիվ ը	Տոկոսը
1	Իրավաբան, այդ թվում՝ փաստաբան	17	5.1	1	0.3	7	1.9	10	3.8	35	2.7
2	Հոգեկան առողջության ոլորտի մասնագետ	14	4.2	1	0.3	8	2.2	14	5.3	37	2.9
3	Հասարակական, այդ թվում՝ հոգեկան առողջության ոլորտում գործող կազմակերպություններ	19	5.7	7	2.2	15	4	14	5.3	55	4.3
4	Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձի հարազատ կամ այլ անձինք	31	9.4	2	0.6	2	0.5	6	2.2	41	3.2
5	Մարդու իրավունքների պաշտպանիզրասենյակ	22	6.7	88	27.6	79	21.3	41	15.4	230	17.9
6	Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձ	3	0.9	3	1	2	0.5	3	1.1	11	0.9
7	Միջազգային կազմակերպություն	7	2.1	0	0	1	0.3	8	3	16	1.2

8	Չանգվածային լրատվության միջոց և/կամ հայտնի չէ ²	214	64.7	216	67.7	249	67.1	167	62.8	846	65.7
9	Այլ	4	1.2	1	0.3	8	2.2	3	1.1	16	1.2
Ընդամենը		331	100	319	100	371	100	266	100	1287	100
Ընդամենը		489*		410*		486*		419*		1804	

* Այս թվերը մեծ են տարվա ընթացքում ՉԼՄ-ներից հավաքագրված հրապարակումների ընդհանուր թվից, քանի որ որոշ նյութերում տեղեկատվություն տրամադրել են՝ պետական մարմինը, և՛ մասնավոր կազմակերպությունը/կամ ոչ պաշտոնատար անձը:

Ինչպես տեսնում ենք աղյուսակ 2-ից, 2018-2020 թթ.-ին նվազել է ՀՀ ոստիկանության և քննչական կոմիտեի տրամադրած տեղեկատվության հիման վրա հրապարակումների թիվը: Սա թերևս վկայում է այն մասին, որ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց կողմից օրենսդրությամբ արգելված գործողությունների կատարման մասին հրապարակումներն են նվազել, ինչը կարելի է գնահատել որպես դրական տեղաշարժ նրանց իրավունքների պաշտպանության բնագավառում:

2017, 2018 և 2020 թթ.-ի համեմատությամբ 2019 թ.-ին նվազել է նաև ՀՀ առողջապահության նախարարության տրամադրած տեղեկատվության հիման վրա հրապարակումների թիվը, սակայն 2019-2020 թթ.կտրուկ աճել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տրամադրած տեղեկատվության հիման վրա հրապարակումների թիվը:

Վերջին տարիներին Էականորեն աճել է Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի տրամադրած տեղեկատվության հիման վրա հրապարակումների թիվը: Դրանք հիմնականում անդրադառնում են գրասենյակի՝ հոգեկան առողջության ոլորտում իրականացրած աշխատանքներին, ոլորտում առկա խնդիրներին, ինչպես նաև դրական տեղաշարժերին:

Հոգեկան առողջության ոլորտում առկա խնդիրներին վերաբերող հրապարակումների համար հիմք են ինչպես Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի տրամադրած տեղեկատվությունը, այնպես էլ հասարակական տարբեր կազմակերպությունների, քաղաքացիների, ոլորտի մասնագետների և այլ աղբյուրներից ստացված տեղեկատվությունը: Այսպես, 2018 թ.-ին հավաքագրված 405 հրապարակումներից 70-ը, 2019 թ.-ին հավաքագրված 437 հրապարակումներից 105-ը և 2020 թ.-ին հավաքագրված 430 հրապարակումներից 47-ն անդրադառնում են ՀՀ-ում հոգեկան առողջության ոլորտում առկա խնդիրներին: Դրանցում մասնավորապես արձանագրվել են՝

- կադրային անբավարար ռեսուրսների խնդիրներ,
- հոգեբուժական հաստատությունում անձի ապօրինի տեղավորման ու բուժման դեպքեր,

²Այն հրապարակումները, որոնք տեղեկատվություն են տրամադրել Հայաստանի Հանրապետությունից դուրս իրականացված գործողությունների մասին, ներառվել են ՉԼՄ և/կամ Նշված չի խմբում (այդպիսիք են՝ 2017 թ. 214 հրապարակումներից 136-ը, 2018 թ. 216 հրապարակումներից 104-ը, 2019 թ. 249 հրապարակումներից 157-ը, 2020 թ. 167 հրապարակումներից 135-ը):

- հոգեկան առողջության ծառայությունների անմատչելիությանն ու ոչ պատշաճ որակի բուժման, այդ թվում՝ ծառայությունների ինստիտուցիոնալ/հիմնարկային լինելը և համայնքահենք ծառայությունների բացակայությունը,
- անգործունակության ինստիտուտի առկայությունը,
- անձի հարկադիր՝ առանց իրազեկված համաձայնության բուժման համակարգի առկայությունը,
- հոգեբուժարաններում գտնվող անձանց թոշակների բաշխման գործընթացի նկատմամբ վերահսկողության բացակայությունը,
- գորակոչի և զինծառայության գործընթացում թերացումները, մասնավորապես հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձի գորակոչը կամ զինծառայության ընթացքում վատ վերաբերմունքի հետևանքով հոգեկան առողջության խնդիրների ձեռքբերումը,
- հոգեբուժական հաստատություններում կոռուպցիոն դրսևորումները,
- հոգեբուժական հաստատությունում անգործունակ անձանց և երեխաների բուժման պրակտիկան՝ առանց վերջիններիս կարծիքը հաշվի առնելու,
- հոգեբուժական հաստատություններում առկա տարբեր այլ խնդիրներ:

Ուշագրավ է, որ հոգեկան առողջության ոլորտի վերաբերյալ ներկայացվող խնդիրները 2017-2020 թթ.-ին գրեթե նույնական են, ինչը նշանակում է, որ պետությունը դրանք հաղթահարելու ուղղությամբ գործուն, պատշաճ քայլեր չի իրականացրել: Մինևույն ժամանակ նշենք, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կայքէջից հավաքագրված՝ պլանավորվող և իրականացվող ծրագրերի մասին նյութերը վերաբերում են նաև անգործունակության ինստիտուտի վերանայմանն ու ապահովագրության լուծմանը:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ հոգեկան առողջության ոլորտում առկա խնդիրների մասին պարբերաբար բարձրաձայնվում է ինչպես պաշտոնատար, այնպես էլ ոչ պաշտոնատար անձանց կողմից: Մինևույն ժամանակ այդ խնդիրները տարիներ շարունակ լուծում չեն ստանում, ինչը հանգեցնում է հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների շարունակական խախտումներին:

Մինևույն ժամանակ հարկ է նկատել, որ իրավապահ մարմինների, մասնավորապես ՀՀ ոստիկանության և քննչական կոմիտեի տրամադրած տեղեկատվության հիման վրա հրապարակումների նվազումը վկայում է հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց կողմից կատարված հանցանքների, ոչ իրավաչափ գործողությունների վերաբերյալ լուսաբանման նվազմանը, որը դրական միտում է վերջիններիս նկատմամբ առկա բացասական կարծրատիպերի դեմ պայքարի շրջանակներում:

Հրապարակումների բնույթը, հանրային վերաբերմունքի ձևավորման վրա դրանց ազդեցությունը

2018-2020 թթ.-ին հավաքագրված 1272 հրապարակումներից 1035-ը տեղեկատվական բնույթի են, 229-ը՝ քրեադատավարական գործողությունների վերաբերյալ, 8-ը՝ դիրքորոշում արտահայտող (տե՛ս աղյուսակ 3):

Աղյուսակ 3

Հրապարակումների դասակարգումը՝ ըստ բովանդակության

N	Հրապարակումների բովանդակությունը	2017 թ.		2018 թ.		2019 թ.		2020 թ.		Ընդամենը	
		Թիվը	Տոկոսը	Թիվը	Տոկոսը	Թիվը	Տոկոսը	Թիվը	Տոկոսը	Թիվը	Տոկոսը
1	Դիրքորոշում արտահայտող	11	2.2	4	1	0	0	4	0.9	19	1.1
2	Քրեադատավարական գործողությունների իրականացման վերաբերյալ	165	33	100	24.7	58	13.3	71	16.5	394	22.2
3	Տեղեկատվական	324	64.8	301	74.3	379	86.7	355	82.6	1359	76.7
Ընդամենը		500	100	405	100	437	100	430	100	1772	100

Ինչպես տեսնում ենք աղյուսակ 3-ից, մշտապես գերակշռում են տեղեկատվական բնույթի հրապարակումները: Այդ հրապարակումներում, ինչպես և 2017 թ.-ին (61 հրապարակում), առավել մեծ թիվ են կազմում տարբեր գիտական հետազոտությունների արդյունքների (2018 թ.՝ 70, 2019 թ.՝ 87, 2020 թ.՝ 25 հրապարակում), հայտնի անձանց հոգեկան առողջության խնդիրների վերաբերյալ հրապարակումները (2018 թ.՝ 23, 2019 թ.՝ 22, 2020 թ.՝ 29 հրապարակում): 2020 թ. ընթացքում մեծ թվով հրապարակումներ են եղել նաև Քովիդ-19-ով և 44-օրյա պատերազմով պայմանավորված (67 հրապարակում Քովիդ-19-ի համավարակի, 30 հրապարակում պատերազմի հետ կապված): Դրանք մասնավորապես վերաբերել են Քովիդ-19-ի համավարակի ու պատերազմի՝ անձի հոգեկան առողջության վրա հնարավոր ազդեցությանը, Քովիդ-19-ի համավարակի կանխարգելման ուղղությամբ պետության և տարբեր կազմակերպությունների կողմից ձեռնարկված միջոցառումներին, հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի ու բուժման հաստատություններ վարակի ներթափանցմանն ու այդ հաստատություններում Քովիդ-19-ի համավարակի ազդեցությանը, պատերազմի բացասական հետևանքների հաղթահարման ուղղությամբ իրականացվող ծրագրերին ու տրամադրվող ծառայություններին: Տեղեկատվական բնույթի հրապարակումները վերաբերել են նաև հոգեկան առողջության ոլորտում իրականացվող աշխատանքներին, առկա խնդիրներին և համակարգային փոփոխությունների

անհրաժեշտությանը, հոգեկան առողջության պահպանման հնարավորություններին, ինքնասպանություններին կամ ինքնասպանությանի փորձերին և այլն:

2018 թ.-ին տարածված դիրքորոշում արտահայտող 4 հրապարակումները վերաբերել են հոգեբուժական հաստատության տնօրենի անօրինական վարքագծին, մասնավորապես՝ Մարդու իրավունքների պաշտպանի գործունեությանը միջամտելուն, 2020 թ.-ին տարածված 4 հրապարակումները՝ հասարակական կազմակերպության կողմից հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների պաշտպանության նպատակով հայտարարություններին և միջազգային կազմակերպության՝ հոգեկան առողջության պահպանման ուղղությամբ միջոցառումների իրականացման կոչին:

Թեև 2018-2020 թթ.-ին քրեադատավարական գործողությունների վերաբերյալ հրապարակումների թիվն ըստ տարիների նվազել է մոտ երկու-երեք անգամ, այնուամենայնիվ դրանք դեռևս մեծ թիվ են կազմում: Նշված ժամանակահատվածում հավաքագրված քրեադատավարական բնույթի 229 հրապարակումներից 98-ը հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց՝ օրենսդրությամբ արգելված գործողություններ կատարելու մասին են (2018 թ.՝ 38, 2019 թ.՝ 28, 2020 թ.՝ 32 հրապարակում): Կարևոր է արձանագրել, որ դրանցից 32-ը պետական մարմինների պաշտոնական կայքերով տարածված կամ պետական մարմինների տրամադրած տեղեկատվության հիման վրա հրապարակումներ են: Մասնավորապես հրապարակումներից 21-ի աղբյուրը քննչական կոմիտեն է, 8-ի աղբյուրը՝ ոստիկանությունը, 2-ի աղբյուրը՝ դատախազությունը, ևս մեկի աղբյուրը՝ դատական տեղեկատվական համակարգը: Քրեադատավարական բնույթի որոշ հրապարակումներ վերաբերում են նաև օրենսդրությամբ արգելված գործողություններ կատարած անձանց նկատմամբ դատահոգեբուժական փորձաքննությունների նշանակմանը, նրանց հոգեբուժական հաստատություն տեղափոխմանը, հանցագործության շարժառիթների բացահայտման նպատակով հոգեկան առողջության խնդիրների առկայության հանգամանքին, հոգեբուժական հաստատության վրա հարձակմանը: Հրապարակումներից 61-ը վերաբերում են հոգեբուժական հաստատություններում (2018 թ.՝ 29, 2019 թ.՝ 13, 2020 թ.՝ 6 հրապարակում) կամ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ (2018 թ.՝ 5, 2020 թ.՝ 8 հրապարակում) կատարված ոչ իրավաչափ գործողություններին:

Հարկ է նշել, որ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց կողմից օրենսդրությամբ արգելված գործողություններ կատարելու վերաբերյալ հրապարակումներ հավաքագրվել են բոլոր տարիներին: 2017 թ.-ին հավաքագրված քրեադատավարական գործողությունների վերաբերյալ 165 հրապարակումներից այդպիսիք էին 108-ը: Ուստի կարող ենք արձանագրել, որ 2018-2020 թթ.-ին նվազել են ինչպես քրեադատավարական գործողությունների, այնպես էլ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց կողմից օրենսդրությամբ արգելված գործողություններ կատարելու վերաբերյալ հրապարակումները: Սա դրական միտում է, քանի որ նման

հրապարակումները դիտարկվում են նաև որպես հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ հանրային բացասական վերաբերմունք ձևավորող: Դրանք նպաստում են հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց՝ հասարակության համար վտանգավոր և սպառնալիք լինելու կարծրատիպային ընկալման խորացմանը:

Բացասական վերաբերմունքի ձևավորմանը նպաստող հրապարակումները վերաբերել են նաև հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց ինքնավնասման դեպքերին, քրեական գործերով մեղադրվողների՝ հոգեկան առողջության խնդիր ունենալու վարկածին, ոչ իրավաչափ գործողությունների իրականացման դեպքում անձին հոգեբուժական հաստատություն տեղափոխմանը, հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց՝ պետական պաշտոններ զբաղեցնելու արգելքի նախաձեռնությանը, հոգեկան առողջության կենտրոնի՝ մանկապարտեզին կից գտնվելու փաստի քննադատությանը, հոգեկան առողջության խնդիրներ ունեցող երեխաների որդեգրմանը՝ հետագայում նրանց նկատմամբ քրեորեն պատժելի գործողություններ կատարելու համար:

Ընդհանուր առմամբ 2018-2020 թթ.-ին հավաքագրվել է հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ բացասական վերաբերմունք ձևավորող 141 հրապարակում (մոտ 11 տոկոս): Հավաքագրված 1272 հրապարակումներից միայն երկուսն են դրական վերաբերմունք ձևավորող, մյուս 1129 հրապարակումները չեզոք բնույթի են (տե՛ս աղյուսակ 4):

Աղյուսակ 4

Հրապարակումների դասակարգումը՝ ըստ հոգեկան առողջության ոլորտը ներկայացնելու բնույթի

N	Բնույթը	2017 թ.		2018 թ.		2019 թ.		2020 թ.		Ընդամենը	
		Թիվ ը	Տոկոս ը	Թիվ ը	Տոկոս ը	Թիվ ը	Տոկոս ը	Թիվ ը	Տոկոս ը	Թիվ ը	Տոկոս ը
1	Բացասական վերաբերմունք ձևավորող հրապարակումներ	137	27.4	43	10. 6	44	10. 1	54	12.6	278	15.7
2	Դրական վերաբերմունք ձևավորող հրապարակումներ	7	1.4	2	0. 5	0	0	0	0	9	0.5
3	Չեզոք բնույթի հրապարակումներ	356	71.2	360	88. 9	393	89. 9	376	87.4	1485	83.8
Ընդամենը		500	100	405	100	437	100	430	100	1772	100

Ինչպես տեսնում ենք աղյուսակ 4-ից, 2018 թ.-ին հավաքագրված 405 հրապարակումներից 43-ը (մոտ 10 տոկոս), 2019 թ.-ին հավաքագրված 437 հրապարակումներից 44-ը (մոտ 10 տոկոս) և 2020 թ.-ին հավաքագրված 430

հրապարակումներից 54-ը (մոտ 12 տոկոս) նպաստում են հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ բացասական վերաբերմունքի ձևավորմանը: Թեև այս հրապարակումների թիվը 2017 թ.-ի համեմատ նվազել է գրեթե 3 անգամ, այնուհանդերձ կարող ենք արձանագրել, որ դրանք շարունակում են զգալի տեղ զբաղեցնել հոգեկան առողջության ոլորտի վերաբերյալ հրապարակումներում: Մինևույն ժամանակ նվազել են հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ դրական վերաբերմունքի ձևավորմանը նպաստող առանց այն էլ քիչ թվով հրապարակումները, ընդ որում 2019-2020 թթ.-ին դրանք առհասարակ բացակայել են:

2018-2020 թթ.-ի հրապարակումներում շարունակվել են կիրառվել հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ վախի, խղճահարության կամ այլ բացասական զգացմունքներ առաջացնող, խարանող եզրույթներ, ինչպիսիք են՝ «հոգեկան հիվանդ», «հոգեխախտ», «շիզոֆրենիկ», «հոգեկան շեղումներ ունեցող», «հոգեկան շեղումներով», «մոլագար», «հոգեկան խեղումներով մարդիկ», «նկրոտիկ», «տառապող»: Այսպես, նման բառապաշար օգտագործվել է հավաքագրված 1272 հրապարակումներից 116-ում, որը կազմում է մոտ 9 տոկոսը (2018 թ.՝ 33 հրապարակում /մոտ 8 տոկոս/, 2019 թ.՝ 63 հրապարակում /մոտ 14 տոկոս/, 2020 թ.՝ 20 հրապարակում /մոտ 5 տոկոս/): Հաշվի առնելով, որ 2017 թ.-ին նման հրապարակումների թիվը 61 էր (մոտ 12 տոկոս), կարող ենք փաստել, որ թեև 2018 ու 2020 թթ.-ին այդ հրապարակումների թիվը նվազել է, 2019 թ.-ին նույնիսկ գերազանցել է:

Հարկ է նշել, որ 2018-2020 թթ.-ին առանձին դիտարկվել և հավաքագրվել են հրապարակումներ, որոնք հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց են պիտակավորում, նրանց նկատմամբ բացասական վերաբերմունք ձևավորում, սակայն որպես այդպիսին հոգեկան առողջության ոլորտի վերաբերյալ չեն, օրինակ՝ հրապարակման մեջ ուղղակի «հոգեկան հիվանդ», «հիստերիկ» և նման բառեր են օգտագործվում: Այդ հրապարակումներում փաստացի օգտագործվում է խտրական բառապաշար, մարդկանց վարքագծի «տարօրինակությունը» պայմանավորում են նրա հոգեկան առողջության խնդիրներ ունենալով, պաշտոնատար կամ քաղաքականությամբ զբաղվող անձանց գործունեությունը, խոսքը վատաբանելու նպատակով նրանց անվանում են «հոգեբուժարանի պացիենտ», «հոգեկան հիվանդ», «շիզոֆրենիկ», փորձում հիմնավորել անձի վարքագիծը հոգեկան առողջության խնդիր ունենալով: Այսինքն այս հրապարակումներում արտահայտվում է հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ արմատավորված բացասական կարծրատիպերը: 2018 թ.-ին հավաքագրվել է այդպիսի 6, 2019 թ.-ին՝ 50, իսկ 2020 թ.-ին՝ 80 հրապարակում: Վերջին երկու տարիներին նման հրապարակումների թվի աճը հիմնականում պայմանավորված է իշխանություններին բնութագրելու նպատակով վերը նշված եզրույթների կիրառմամբ:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ զանգվածային լրատվության միջոցներով շարունակվում են տարածվել հրապարակումներ, որոնք նպաստում են հոգեկան

առողջության խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ բացասական վերաբերմունքի ձևավորմանը՝ ամրապնդելով նրանց հանդեպ գոյություն ունեցող կարծրատիպերը: Մինևույն ժամանակ գրեթե բացակայում են պատկան մարմինների կամ զանգվածային լրատվության միջոցների կողմից հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ այդ կարծրատիպերի հաղթահարմանն ուղղված հրապարակումները, ինչը վկայում է մշակված հայեցակարգի հիման վրա քաղաքականության բացակայության մասին:

Հրապարակներում մարդու իրավունքների խախտման դեպքերի արտացոլումը

2018-2020 թթ.-ի ընթացքում զանգվածային լրատվության միջոցներով տարածվել են 27 հրապարակումներ, որոնք անդրադարձել են ՀՀ-ում անձի իրավունքների հնարավոր խախտումներին (2018 թ.՝ 10, 2019 թ.՝ 1, 2020 թ.՝ 16 հրապարակում): Հրապարակումները մասնավորապես վերաբերել են առողջության պահպանման, խոշտանգումներից և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու, անձի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքների հնարավոր խախտումներին (տե՛ս աղյուսակ 5):

Աղյուսակ 5

Հնարավոր խախտումների վերաբերյալ հրապարակումների թիվը՝ ըստ տարիների և իրավունքների

	2018 թ.	2019 թ.	2020 թ.
Առողջության պահպանման իրավունք	3	1	1
խոշտանգումներից և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունք	1	0	7 (երկու դեպքի մասին)
Անձի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք	6 (երկու դեպքի մասին)	0	8 (երկու դեպքի մասին)

իրավունքի ենթադրյալ խախտումների վերաբերյալ հրապարակումներում տեղեկություն է տրամադրվել հոգեբուժական հաստատությունում անձին ապօրինի պահելու ու բուժելու, ոչ բավարար հետազոտությունների հիման վրա ախտորոշելու, դատապարտյալին և կալանավորին ժամանակին և պատշաճ բուժօգնություն

չտրամադրելու, զինվորական ծառայության ընթացքում հրամանատարի կողմից խոշտանգման ու դաժան վերաբերմունքի արդյունքում հոգեկան առողջության խնդիրների ձեռքբերման և հոգեբուժական հաստատությունում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձի նկատմամբ բռնության գործադրման վերաբերյալ: Նշենք, որ 2017 թ.-ին ևս հրապարակումներ են եղել զինծառայողի նկատմամբ ֆիզիկական բռնության արդյունքում հոգեկան առողջության խնդիրների ձեռքբերման, քրեակատարողական հիմնարկներում դատապարտյալին պատշաճ բուժօգնության չտրամադրման, հոգեբուժական հաստատությունում ֆիզիկական բռնության վերաբերյալ:

Տարածվել են նաև անձնական տվյալներ պարունակող հրապարակումներ առանց տվյալ անձի թույլտվության մասին համապատասխան նշումի կամ օրինաչափ նպատակի (որոշ հրապարակումներում, բացի հոգեկան առողջության խնդիր ունենալու մասին տեղեկությունից, նշվում է անգամ հիվանդության ախտորոշումը): Այսպես, հավաքագրված 1272 հրապարակումներից 86-ը պարունակել է այնպիսի անձնական տվյալներ, որոնց միջոցով հնարավոր է նույնականացնել անձին: Ըստ այդմ, խախտվել է այդ անձանց անձնական տվյալների պաշտպանության իրավունքը (տե՛ս աղյուսակ 6):

Աղյուսակ 6

Անձի անձնական տվյալների պաշտպանության իրավունքը խախտող հրապարակումների դասակարգումը

Տարեթիվ ը	Հավաքագրված հրապարակումների թիվը	Անձի անձնական տվյալների պաշտպանության իրավունքը խախտող հրապարակումների	
		Թիվը	Տոկոսը
2017	500	58	11.6
2018	405	28	6.9
2019	437	28	6.4
2020	430	30	7
Ընդամեն ը	1772	144	8.1

Ինչպես տեսնում ենք աղյուսակ 6-ից, անձի անձնական տվյալների պաշտպանության իրավունքը խախտող հրապարակումների թիվը 2017 թ.-ի համեմատությամբ հաջորդող տարիներին գրեթե կիսով չափ նվազել է, ինչը դրական արձանագրում է հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների պաշտպանության տեսակետից:

2018 թ.-ին հավաքագրված անձնական տվյալների պաշտպանության իրավունքը խախտող 28 հրապարակումներից 4-ը տարածվել է պետական մարմինների կամ պաշտոնատար անձանց տրամադրած տեղեկատվության հիման վրա (3 հրապարակում՝ ՀՀ արտաքին գործերի նախարարություն, 1 հրապարակում՝ ՀՀ

պաշտպանության նախարարություն): 22 հրապարակման տեղեկատվության աղբյուր են հանդիսացել զանգվածային լրատվության միջոցները, 2-ի դեպքում՝ հարազատները: 2019 թ.-ին հավաքագրված անձնական տվյալների պաշտպանության իրավունքը խախտող 28 հրապարակումներից 16-ը տարածվել է պետական մարմինների կամ պաշտոնատար անձանց տրամադրած տեղեկատվության հիման վրա (7 հրապարակում՝ քրեակատարողական ծառայություն, 3 հրապարակում՝ համայնքի ղեկավար, 2 հրապարակում՝ դատախազություն, 2 հրապարակում՝ պատգամավոր, 1-ական հրապարակում՝ ՀՀ արտաքին գործերի և պաշտպանության նախարարություններ): Մյուս 12 հրապարակումներում տեղեկատվության աղբյուրը զանգվածային լրատվության միջոցներն են (8 հրապարակում), հասարակական կազմակերպությունները (3 հրապարակում) և հոգեկան առողջության խնդիր ունեցող անձինք (1 հրապարակում): 2020 թ.-ին հավաքագրված անձնական տվյալների պաշտպանության իրավունքը խախտող 30 հրապարակումներից 5-ը տարածվել է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության տրամադրած տեղեկատվության հիման վրա, մյուս 25 հրապարակումներում տեղեկատվության աղբյուրը զանգվածային լրատվության միջոցներն են (16 հրապարակում), հարազատները (3 հրապարակում), փաստաբանները (6 հրապարակում), բժիշկները (2 հրապարակում):

Հավաքագրվել են նաև հրապարակումներ, որոնցում առկա տեղեկատվությամբ չի բացառվում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձի նույնականացումը: 2018 թ.-ին մասնավորապես հավաքագրվել է 10, 2019 թ.-ին՝ 5, 2020 թ.-ին՝ 9 նման հրապարակում: 2018 թ.-ի հրապարակումներից 4-ի տեղեկատվության աղբյուրը քննչական կոմիտեն է, 5-ինը՝ ոստիկանությունը, 1-ինը՝ զանգվածային լրատվության միջոցը: 2019 թ.-ի հրապարակումներից 3-ը տարածվել է ոստիկանության, 2-ը՝ արտակարգ իրավիճակների նախարարության տրամադրած տեղեկատվության հիման վրա: 2020 թ.-ի հրապարակումներից 2-ականը տարածվել են Տեղական ինքնակառավարման մարմնի ներկայացուցչի, դատախազության, հասարակական կազմակերպության և զանգվածային լրատվության միջոցների, 1-ը՝ ֆեյսբուքյան օգտատիրոջ տրամադրած տեղեկատվության հիման վրա:

Հարկ է նշել, որ ինչպես 2017 թ.-ին, 2018-2020 թթ.-ին մեծ թիվ են կազմում shamshyan.com կայքի տրամադրած տեղեկատվության հիման վրա հոգեկան առողջության բնագավառի վերաբերյալ հրապարակումները, որոնք խախտում են անձնական տվյալների պաշտպանության իրավունքը: Այդ կայքի տրամադրած տեղեկատվության հիման վրա 2018-2020 թթ.-ին տարածվել է այդպիսի 25 հրապարակում, որը կազմում է զանգվածային լրատվության միջոցի տրամադրած տեղեկատվության հիման վրա նույն ժամանակատվածում անձնական տվյալների պաշտպանության իրավունքը խախտող 50 հրապարակումների 50 տոկոսը: Հարկ է նկատել, որ զանգվածային լրատվության միջոցները փաստացի ոչ միշտ են զգայուն և արտատպելով տարածում են տարբեր աղբյուրներից ստացված անձնական տվյալներ:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց վերաբերյալ լուսաբանումներում շարունակվում է խախտվել նրանց անձնական տվյալների պաշտպանության իրավունքը: Բացի դա, մտահոգիչ են մնում նաև հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց՝ մարդու տարբեր իրավունքների խախտումները:

Ամփոփում

Այսպիսով, 2018-2020 թթ.-ի ընթացքում 16 կայքէջերի մշտադիտարկման արդյունքում հավաքագրված հոգեկան առողջության ոլորտի վերաբերյալ 1272 հրապարակումներից 40-ը տարածվել են պետական մարմինների կայքէջերով, 1232-ը՝ զանգվածային լրատվության միջոցներով:

Ինչպես բոլոր տարիներին, գերակշռում են տեղեկատվական բնույթի հրապարակումները, սակայն զգալի թիվ են կազմում նաև քրեադատավարական գործողությունների վերաբերյալ հրապարակումները: 2018-2020 թթ.-ին հավաքագրված 1272 հրապարակումներից քրեադատավարական են 229-ը: Մինևույն ժամանակ դրական արձանագրում է 2017 թ.-ի համեմատ այդ հրապարակումների թվի զգալի նվազումը: Ընդ որում կտրուկ նվազել է նաև դրանցում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց՝ օրենսդրությամբ արգելված գործողություններ կատարելու մասին հրապարակումների թիվը, որոնք նպաստում են հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ բացասական վերաբերմունքի ձևավորմանը՝ ամրապնդելով նրանց նկատմամբ առկա բացասական կարծրատիպային ընկալումները: Մինևույն ժամանակ հարկ է ընդգծել, որ գրեթե բացակայում են պատկան մարմինների կամ զանգվածային լրատվության միջոցների կողմից այդ կարծրատիպերի դեմ պայքարին միտված հրապարակումները, ինչը վկայում է այս հարցում միասնական, արդյունավետ քաղաքականության բացակայության մասին:

Շարունակվում է հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց անձնական տվյալների տարածումն առանց համապատասխան նշումի կամ օրինաչափ նպատակի՝ այդպիսով խախտելով նրանց անձնական տվյալների պաշտպանության իրավունքը:

Թեև հոգեկան առողջության ոլորտում խնդիրների լուսաբանումներից կարող ենք արձանագրել տարբեր աշխատանքներ դրանց լուծման ուղղությամբ, այնուհանդերձ այդ խնդիրները մնում են օրակարգային, պատկան մարմինների կողմից գործունե և արդյունավետ քայլերի իրականացումը՝ անհրաժեշտություն: